

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏՆՕՐԼՆ—ԽՄԲԱԳՐԻ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 34

19 ՕԳՈՍՏՈՍ 1900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՑՈՐԵԼԵԱՆԸ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Էջ ՄԸ ՄԵՐ ՀԻՆ ԼՐԱԳՐՈՒԹԵՆԷՆ	ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ
ՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ	
Զբօսանք եւ խաղ	ՏՈՔԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ
ՆԻՋԱՋԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ	Ֆ.
ՆԱՐԵԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ	ԳԻՄՄԷՆ
ԶԱՄԼԸՃԱ	Մ.
«ՄԱՍԻՍ»Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ	

ՀԱՍՑԻ

در علیہ غلطہ «مسیس» غزنی سی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստանկեան Խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրին է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը զտուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահիչ-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն փոխ :

Զեռնէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

“ԱԼԼԵՍԱՆՁԱ”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաժամերով, օժիտի, ցիւանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութենէ ետքը, երբէք ապահովագիրները (բօլիս) չեն ջնջուիր, մենամարտն ու անձնապատկերութիւնը կ'երաշխաւորուին, ընաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագրին (բոլիմ) չի պահանջուիր, ապահովագրինու վճարումը զարգելու պարագային՝ ապահովագիրը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չաւնուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրութեան :

Արկածեալներու դէմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ :

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէյի, քրկաթուղիի, չողենաւի, առագաստ անաւի, միջատներու խայթուածքի եւ ապահովագրութեան արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ :

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած :

Ընկերութեան պանքան է՝ ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56

ԻՍԹԸՐԸ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԴԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կարասի, ապրանք

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ 7,250,000 ՖՐԱՆԲ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան գրամատուեն է՝ ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ

ՄԱՍԻՆ

49^{րդ} ՏԱՐԻ

19 ՕԳՈՍՏՈՍ 1900

ԹԻԻ 34



ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՅՈՒՆԵԼԵԱՆ




25^{րդ} ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾՍԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԳԻՈՅ



Օսմանեան մեծազօր Կայսրութեան միլիոնաւոր հաւատարիմ հպատակները որոնք քառորդ դարէ ի վեր ամէն տարի այս օրս ցնծութեան ինքնաբոլս արտա-յայտութիւններով կը տօնեն Վեհ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ Գահակալութեան բարեբաստիկ տարեգարձը, այս անգամ նմանը չտեսնուած շքեղութեամբ, աննկարագրելի հանդիսաւորութեամբ և անհուն բերկրութեամբ կ'ողջունեն Կայսերական Յոբելեանը որ նշանաւոր թուական մը կը կազմէ թուրքիոյ պատմութեան մէջ:

Մայրաքաղաքէն սկսեալ, ամէն քաղաք, ամէն գաւառ, ամէն գիւղ, կեդ-րոն վայրերէն մինչև հեռաւոր անկիւնները, մեծամեծ պատրաստութիւններով կը մասնակցին այս հոյակապ տօնին և բոլոր ժողովուրդը միաբերան բարեմաղթու-թիւններով կը շնորհաւորէ Ն. Կ. Վեհափառութեան Գահակալութեան քսանը-

հինգամեայ փառաւոր տարեդարձը : Թուրքիաբնակ օտարներն ալ՝ բնիկներէն ոչ նուազ խանդավառութեամբ կը ձայնակցին այս բարեմաղթութեանց ու շնորհաւորութեանց , և Կայսերական Յոբելեանի հանդէսը կը տօնեն ամենափայլուն կերպով : Նոյնպէս օտար երկիրներու մէջ գտնուող բոլոր օսմանեան հպատակները , որոնք շքեղ հանդէսներ կազմակերպած են և ուղերձներով ու հեռագիրներով կը մատուցանեն իրենց երախտագիտական ու հաւատարմական զգացումները յօտս Կայսերական Գահոյից :

Կայսերական բարեբաւօտիկ Յոբելեանին ի պատիւ կատարուելիք հանդէսներէն և մատուցանելի շնորհաւորական ուղերձներէն ու երախտագիտական նուէրներէն զատ , բազմաթիւ հանրօգուտ հաստատութեանց բացումն ու հիմնարկէքը կը կատարուի , որոնք կրթական , բարեգործական , արուեստագիտական և երկրին զարգացմանը նպաստող ամէն ճիւղերու մէջ Ն. Կ. Վեհափառութեան Գահակալութեանն ի վեր բացուած անհամար հաստատութեանց վրայ աւելնալով , փառաւոր յիշատակարաններ պիտի կազմեն այսօրուան անմոռաց թուականին :

Հատորներ պէտք են մի առ մի թուելու համար այն բոլոր երկրաշէն ձեռնարկութիւնները որոնք ի գլուխ ելած են ընդ հովանեաւ Ն. Կ. Վեհափառութեան և նկարագրելու համար այն հոյակապ շրջանը զոր բոլորած է Օսմանեան Կայսրութիւնը և այն հսկայաքայլ յառաջդիմութիւնները զորս ըրած է Թուրքիա յորմէհեաէ ՕԳՈՍՏՍՖԱՌՍՈՒՆ ԱՊՏՏ-ԻՒՆ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐԸ բազմեցաւ ի Գահ :

Երկրին ելմտական ու տնտեսական վարկին յարաճուն բարձրացումը , օսմ. բանակին ու նաւատորմին զօրացումը , երկաթուղիներու շինութիւնն ու ընդարձակումը , հանրօգուտ շինութեանց բազմանալը , դպրոցներու բացումը , մամուլին զարգացումը , երկրագործական ու արուեստագիտական աշխատութեանց և ուսումներու տրուած մղումը , և ուրիշ ամէն կարգի օգտաշատ ձեռնարկութեանց սկզբնաւորութիւնն ու յարատեւութիւնը Ն. Կ. Վեհափառութեան իմաստուն մտքէն բղխած և բարձր ուշադրութեանը առարկայ եղած են չարունակ , և սքանչելապէս ցոյց կու տան թէ Օգոստոսփառ Սուլթանը անդուլ անդադար կը հսկէ ինչպէս իր երկրին ու ժողովրդեան բարօրութեանը նոյնպէս բոլոր հանրօգուտ ձեռնարկութեանց վրայ , իր Կայսերական հոգածութեան և իմաստութեան նշանները ցոյց տալով ամէն առթիւ և ամենուրեք : Ն. Կ. Վեհափառութիւնը՝ իբրեւ Հայր իր ժողովրդեան , չի մոռնար նաև մարդասիրական հաստատութիւնները , կարօտեալները , աղքատները , հիւանդները , և դրամական առատաձեռն պարգեւներով կը սատարէ ամէնուն ալ , որոնք օրհնութեամբ կ'արտայայտեն իրենց երախտագիտութիւնը : Կայսերական Յոբելեանի շրջանը կազմող քսանհինգ տարիներու միջոցին թէ՛ օսմանեան ոստանին և թէ՛ գաւառներու մէջ հաստատուած հիւանդանոցները , անկելանոցները , աղքատանոցները գործնական փառաւոր ապացոյցներն են Ն. Կ. Վեհափառութեան , զթասիրական զգացումներուն , ինչպէս անթիւ անհամար դպրոցներն ու արհեստանոցները՝ իր ուսումնասէր ու արուեստասէր ոգիին :

Աշխարհածանօթ իրողութիւն մըն է նաեւ թէ նոյն հիացմամբ ու յարգանքով կը գնահատեն օտարազգիներն ալ Վեչ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ ճարտար քաղաքագիտութիւնը ու նուրբ դիւանագիտութիւնը որոնց շնորհիւ Օսմանեան Կայսրութիւնը ակնածելի դիրք մը գրաւած է բոլոր օտար պետութեանց հանդէպ և բարեացակամ յարաբերութիւններ կը տածէ անոնց հետ։ Այն բոլոր վեհապետները, իշխանները ու օտարազգի ականաւոր անձնաւորութիւնները որոնք Կ. Պոլիս այցելած են, Ն. Կ. Վեհափառութեան կողմէ վաշխեւած են չքեղ հիւրընկալութիւն մը ու կայսերական համակրանաց հաւաստիքների, որոնք անշնչելի յիշատակներ կը թողուն անոնց մտքին մէջ։ Օտար դրամատէրներն ու ձեռնարկունները, տեղացիներուն պէս, կը վայելին մեծամեծ դիւրութիւններ զորս անխտիր կը շնորհէ Ն. Կ. Վեհափառութիւնը՝ հանրօգուտ շինութեանց ծաւալման համար ի թուրքիա։

Շնորհաւորական ու բարեմաղթական միահաղոյն արտայայտութիւններ կը կատարուին այսօր ի Կայս. Պալատ՝ Օսմանեան աւագանիին, նախարարներու, քաղաքային ու զինուորական պաշտօնատարներու, հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերու, դեսպանական մարմնին, զանազան երկիրներէ եկած պատգամաւորութիւններու, հանրային վարչութեանց ներկայացուցիչներու և ամէն անոնց կողմէ որոնք դիրք մը և պաշտօնական հանգամանք մը ունին, մինչ միեւնոյն ատեն՝ ամէն ազգի ժողովուրդներ՝ իրախճանութիւններով, լուսավառութիւններով, կը մասնակցին այս բարեբաաստիկ տարեդարձին առաջ բերած ցնծութեան ու խանդավառութեան որոնց արձագանգ կը հանդիսանայ մամուլը։


Մասնաւ իւր, իբրեւ մէկը Կ. Պոլսոյ հնագոյն թերթերուն, որ իր քառասունըինը տարուան գոյութեան վերջին քառօրդ դարու շրջանը բոլորած է բնդ հովանեաւ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ և արժանացած է Ն. Կ. Վեհափառութեան հայրական շնորհներուն, իր խոնարհ ձայնը միացնելով տեղական լրագրութեան ձայնին, կը մաղթէ արեւշատութիւն ու յարատեւ բարեբաստութիւն Օսմանեան մեծազօր ինքնակալին, և Կայսերական Յորեւելանին առթիւ ամէն կողմէ բարձրացող օրհներգութեանց ու բարեմաղթութեանց ձայնակից՝ կը գոչէ

ՅԱՐԷՏ ԿԵՑՅԷ

ՎԵՃ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ԹՈՒՐԻՔԻՈՅ

ԷՋ ՄԸ ՄԵՐ ՀԻՆ ԼՐԱԳՐՈՒԹԵՆԵՆ



Ասորո է ֆէնտիի մահուան առթիւ՝ Մասիսի նախորդ թիւով ազգ. քրոնիկի մը մէջ յիշուած էր պետական այդ վաղեմի պաշտօնաւորին երիտասարդութեան օրերուն մէջ ունեցած խմբագրական կարճատեւ շրջանը, որ անոր կեանքին մուսուսած՝ բայց հետաքրքրական կողմերէն մէկը կը կազմէ, բանասէրներուն համար մանաւանդ։ Մեր ընթերցողներէն ոմանց կողմէ յայտնուած փափագի մը գոհացում կու տանք այսօր, քիչ մը մանրամասնօրէն խօսելով Նոյեան Աղաւնիին վրայ զոր 1852էն 1853 կը հրատարակէին Կ. Պոլսոյ մէջ երկու ուսեալ Իզմիրցիները, ընկերովի ստորագրելով թերթին ներքեւ «Տեսա՛րք յա գրոյս, Դրիգոր Մարկոսեան = Սահակ Այրոյեան, Անդամք քարգնանաւսան Բարձրագոյն Դրան»։ Քանի մը անջատ թիւեր այդ «չաբաթագիր»էն զոր բարեկամ մը Մասիսի խմբագրութեան տրամադրութեան ներքեւ դրաւ, տարիք եւ դիւրութիւն կընծայեն մեզի՝ քանի մը էջ նուիրել քառասունըութը տարի առաջուան հայ լրագրութեան այդ նմոյշին վրայ։

Առաջին առաւելութիւնը որ աչքի կը զարնէ այդ թերթին վրայ, թուղթին թանձրութիւնն է որ այսքան երկար ժամանակամիջոց մը, ձեռքէ ձեռք ու դարակէ դարակ անցնելով, կը մնայ անաղաբ, գրեթէ առանց պատուածքի ու առանց ճմրթուկի։ Միածալ չորս էջէ կը բաղկանայ Աղաւնին, իւրաքանչիւրը Յակնան լայն սիւնակով, խոշոր ու փոքր տառերով խառն։ Առաջին երեսը միօրինակ կերպով յատկացուած է «Ներքին լուրեր»ու, որոնց տեղը կը լռէ երբեմն խմբագրական յօդուած մը օրուան կարեւոր իրողութեան մը վրայ՝ ինչպէս, օրինակի համար, Շիրքէթի Խայրիյէի կազմութիւնը որ ծանուցուած է 1852 մարտ 20ի թիւին մէջ առանձին խմբագրականով մը։

Կը հետաքրքրուիք անշուշտ, որ պահ մը

կանգ առնենք այս յօդուածին առջեւ որ կը խօսի մեր ամէն օր երթեւեկած շոգենաւերուն առաջին փորձերուն եւ զանոնք վարող ընկերութեան հիմնարկութեանը վրայ։ Լայտի ընկերութիւնը օրինակ ցուցնելով եւ զովելով Շիրքէթի Խայրիյէի կազմութեան գաղափարը, մեզմէ շատերուն համար անծանօթ եղող ստեղծելութիւնը կու տայ Նոյեան Աղաւնին իր հրդ. թիւին մէջ։

Յարգոյ հասարակութեան յայտնի է որ առ ընկերութեան շոգենաւերը կայսերական հրովարտակա՝ հայազգի երեւելի վաճառականներէն մեծապատիւ Մկրտիչ աղայի երաշխաւորութեամբը՝ Պիլէզիկեան մեծարգոյ Յակոր եւ Քալենեան աղաներուն վեց տարուան վարձու տրուած են՝ տված ազատ ի ծախուց՝ 2100 քառի ընկերութեան վճարելու պայմանաւ։

Կերևոյ թէ այդ թուականին՝ մեծապատիւը մեծարգոյին վրայ նոյն գերակառնութիւնը ունէր, ընկերային տեսակէտով, ինչ որ ունի այսօր ազնուաշուքը մեծապատիւին վրայ։ Բառերը կը փոխուին, բայց բարքերը կը մնան։

Ուրիշ թիւի մը մէջ — 1853 ապրիլ 4 — հրատարակուած կը գտնենք Օսմ. Պանքային հիմնարկութեան կանոնագիրը, կայսերական հրովարտակով վաւերացած։ Պանքան, կամ «Օսմանեան սեւեռնատուն»ը — ինչպէս զըրուած է — զօրծել սկսած է նոյն տարուան յունիս 1ին, իրեն հիմնադիր ունենալով «Միհրան Զէլէպի Տիւզեան (կառավարիչ), Պօղոս «Զէլէպի Տիւզեան, Արրահամ ամիրա Ալլահ-«վէրսեան, Մազսուտ ամիրա Սարիմեան, «Յովհաննէս աղա Թընկըրեան, Տիրան աղա «Ալիքսանեան, Մկրտիչ աղա Պիլէզիկեան, «Պետրոս աղա Եաղըքճեան, Միսի Եանի «Փափարի (յոյն), Միսթր Հանարն (անգղիացի), Մօսիէօ Տավիտ Կլավանի (գաղղիացի), «Մօսիէօ Զարիֆի (Ռուսաց հպատակ)»։

Բայց այս պարագայները չափ հետաքրքրելու արժանի չեն, փոխանք դառնալով թերթին խմբագրական պատկերացումն եւ ազ-

գային ու բանասիրական բաժիններուն, որոնք աւարկան կը կազմեն այս յետահայեաց ակնարկին :

Նոյեան Աղաւնիին Բ. էջը յատկացուած է, կանոնաւորապէս, արաքին լուրերու՝ առանց Քաղաքական Տեսութեան : Ազգային լուրերը Գ. էջը կը գրաւեն ու մեծ մասով կը փոխանցուին Դ. ը որ «Ջանազան Լուրեր»ու (տճիրք, արկածք, եւլն) գլուխ մըն ալ կայ : Ծանուցումը հազուադիւրէն է. հատ մը կը գտնենք Կրդ թիւին վերջը, ձիւս մը վիճակահանութիւնը որ պիտի բլայ եղեր «Դա-«լաթիա», Պօրսա ըսուած վաճառականաց «գումարման տունը» : Ընդհակառակը, իւրաքանչիւր թիւի մէջ կէս սիւնակ յատկացուած է Առեւտրական գիներուն, թէ՛ Կ. Պոլսոյ եւ թէ՛ Իզմիրի հրապարակներէն, — ինչ որ կը ցուցնէ թէ կէս դար առաջուան հայ խմբագիրները նոյնքան բմբռնած էին կարեւորութիւնը ցորենի, հաճարի, բուրդի, եւլն. գիներու հրատարակման, որքան այսօրուանները, սա տարբերութեամբ որ ան ատենը Առեւտր. Լրագիր մը գոյութիւն չունէր՝ ուսկից քաղելու գիւրութիւնը վայելէին :

Ազգային Լուրերը, Ապրո եւ Մարկոսեան էֆէնդիներու «չարաթագիր»ին մէջ, գրեթէ միշտ համեմուած են խորհրդածութիւններով. — գիտողութիւն մը կամ գնահատում մը, — շատ անգամ ալ յօդուածի մը չափ բնդարձակ, այսօրուան «Ազգային Տեսութիւն»նեւրուն տեղը բռնելով : Այդ բաժինին մէջ կը հանդիպիմ Հիւանդանոց այցելութեան մը նկարագրութեան, ստորագրուած «գլխուկաւ ծառայ Է. Ն. » որ իրաւ է թէ չի համապատասխաներ Ազգ. քսանդր Փանոսեանի այցելութեան սրամիտ նկարագրութեանը, բայց ամբողջ ու կոկիկ նօթագրութիւն մըն է : Վիճարանութիւնը շատ քիչ տեղ կը բռնէ ամբողջ թերթին մէջ, ու կատարուածներն ալ բնդհանրապէս զգուշաւոր ու շրջահայեաց ձեւ մը ունին : Առաջին տարուան թիւերուն մէջ, ամէնէն աւելի բուն լեզու մը գործածուած է Հ. Կապարօ Վուչինօ անուն լատին քահանային գէմ, անոր հրատարակած Միխիքայեան Վեկեսիկոյ գրքին աւթիւ որ օրուան խնդիր է եղեր այդ միջոցներուն հայ մամուլին մէջ :

Դրականութիւնը շատ անշան բաժին մը ունի, եւ այն ալ թարգմանածոյ հատուածներ զանազան հեղինակներէ : «Բանասիրական» տիտղոսին տակ, իրրեւ թերթօն, կը հանդիպիմ գրաբար ստանաւորի մը որուն վերնագիրը միայն բաւական յանձնարարական մըն է . . . չի կարողաւ համար. «Յաջողութիւն ստանայ բարեկամը, իսկ ձախողանք փորձէ գնոսա», հեղինակ՝ Իզմիրի Մեսրոպեան վարժարանի աշակերտ մը, այսօր ծերունի մը անշուշտ : Ուրիշ բանասիրական մը, Ռասինի մէկ քերթուածին թարգմանութիւնը, — դարձեալ նոյն վարժարանի մէկ սանին կողմէ, — եւ աւելորդ է ըսել թէ գրաբար :

Նորութիւն մը որուն պիտի նախանձէին այսօրուան Թերթօնները, Մոնթե Քրիստոյի թարգմանութիւնն է որ Տրդ. թիւէն կը գրաւէ Նոյեան Աղաւնիի Ա. էջին գեանայարկը, երբեմն շատ խոշոր, երբեմն շատ մանրիկ տառերով, առանց կանոնաւոր շարունակութեան ու յանկարծ ընդհատուած են : Եւ Տիւմայի հրաշակերտ վէպին կը յաջորդէ գրաբար ուսումնասիրութիւն մը Մովսէս Խորենացիի վրայ, «Ճանապարհորդութիւն յերուսաղէմ» եւ առանց պէս անջատ գրուածներ :

Բայց եթէ բանասիրական ճիւղը անխնամ է, կրթական գործի մասին մեծ հոգածութիւն կը տեսնուի Նոյեան Աղաւնիի խմբագիրներուն քով : Շարունակական վիճակագրութիւն մը կայ Պոլսոյ ազգ. դպրոցներուն — նոյնքան մանրամասն որքան այսօր Ուսումնական Խորհուրդին պատրաստածները — ուսուցիչներուն եւ «վարժապետուհի»ներուն անուններովը մէկտեղ :

Կը փորձուիմ գէթ եզրակացութիւնը քաղել այդ վիճակագրութեան որ բարդատական տեսակէտով իր կարեւորութիւնը կրնայ ունենալ :

Մեր յականէ անուանէ յիշատակած երեսուն եւ եօթն ազգային ուսումնարանները 3904 կամ (մէկալ երեք զգարոցներուն մէջ ալ 96 աշակերտ համրելով՝ ընդամէնը) 4000 հայագրի պատանիք եւ 620 աղջկունք կը յաճախեն կրթութիւն անելու կամ ուսմունք եւ գիտութիւն ձեռք բերելու համար : Մեր խօսքը միայն հասարակաց ազգային ուսումնարաններու համար է. եւ վերոյգրեալ հաշիւէն դուրս են քանի մը գիւղերու եւ Թաղերու մէջ գտնուած մասնաւոր դպրատունները ուրտեղ ազգիս գլխաւորաբար

խեղճ մասին զաւակունքը կարգաւ գրել կը սովորին քանի մը դուրուշ շաբաթական վարձ տալով :

Ու այս աղօտ հայեացքէն ետքը, — որ դեռ կրնար տարածուիլ թերթին ամէն մէկ ստորաբաժանումին, ամէն մէկ լուրին վրայ իսկ, որոնց մէջ ժամանակին յատկանիշը կրող հետքեր չեն պակսիր, — կը ծրարեմ դարձեալ

Նոյեան Աղաւնիի դեղնած հաւաքածուն՝ վերադարձնելու համար իր դարակին մէջ, մեղմաղճ տպաւորութեան մը տակ՝ թէ քառասուն-յիսուն տարի ետքը որո՞նց պիտի վիճակի արդեօք այս միեւնոյն պրպտումը կատարել այսօրուան հայ թերթերուն շուրջը...

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ⁽¹⁾

ԶԲՏԱՆՔ ԵՒ ԽԱՂ

Այս խաղերէն զատ ունինք դեռ տոհմային խաղեր, զորս կարելի է մտցնել մեր վարժարաններուն մէջ. ինչպէս Աղուեսուկը, Ափապուղը, Աջապուկը, Բիրջեղուկը, Բաբուսանը, Գլոր կամ Գլորուսայիսը, Գլուշան, Խօրուքալը, Ճնճղիին, Ճորը, Ճանաւակը, Ծօր-խանեղուկը, Ուիե-ուիե, Պարսիք կամ Պարսասիկը, Սլի-վիկն, Տրնկուզան, Սահնակը, Բալխիւրը, Ծորորը, Տնիկիւրը, Զասկըսանը, Էշ-խաղուկը, Վեգի խաղը, Ծար-պարը, Թիւթիւրը, Ճիպոսնը, Կափը, Թօփիկը, Աշա-փշիկը, Լեփուկը, Հիշուրը, Ճուկը, Թագկոցիկն կամ Պահուրսուկը եւն. որոնք մարմնամարդական հիանալի խաղեր են, անձանթ թուրովին Եւրոպացուց եւ որոնց բացատրութիւնները կը յանձնարարեմ ձեզ կարդալ Անգիւր Դպրութեան, եւ Բիւրակն չաբաթաթերթին անցեալ տարուան Նոյեմբերի թիւերուն մէջ. երանի՜ թէ ձենէ մէկը աշխատէր բոլոր այս հայ խաղերը հաւաքել եւ մեկին տեղեկութիւններով հրատարակ հանել. Իզմիլեանց կտակի մրցանակին արժանի ամենայնարար աշխատութիւնը կ'ըլլար այն ըստ իս :

Սակայն գիտցէ՛ք թէ այսչափ խաղերը մեծ մասամբ աւելի մանչերու համար են, թէեւ կան որ երկու սեռի համար ալ կրնան յարմարիլ. ինչ որ բժիշկը միայն կրնայ որոշել.

աղջիկներու համար մասնաւորապէս որոշելու են ա՛յնպիսի խաղեր որոնք ըլլան զարգացուցիչ անոնց ոտքերուն, ազդերուն, մանաւանդ կոնքին. յսկուրջիով օրուիլը, չուան ցասկեղը, պարեղը, չա՛տ յարմար են աղջիկներու, ինչպէս նաեւ վազվաւառելով եղած բոլոր խաղերը, ու Գրասէր Ատոմին Աւելի Ճառին մէջ բրած յանձնարարութիւնները, որոնք մեծապէս կ'ազդեն աղջիկներու կոնքային ընդլայնումին :

Այսչափ խաղերէն զատ, կրնանք նաեւ մեր աշակերտները երբեմն տանիլ բուսահաւաքութեան, կամ ծաղկահաւաքութեան, որով անոնք ո՛չ միայն բոյս եւ ծաղիկ ճանչնալ կը սկսին, այլ եւ կը ստիպուին հոս հոն վազել, լեռներն ի վեր մագլել, դաշտերն ի վար լջնել այս կամ այն ծաղիկը քաղելու, որով ահա իրենց մարմինը կենթարկեն պէտք եղածէն աւելի օրինաւոր եւ բնական մարզութիւններու. կրնանք տանիլ նաեւ զանոնք երկար պտոյտներու եւ երբեմն ալ ծովի եզերք եւ հոն խաղցնել տալ անոնց ֆարթիւ ըսուած խաղը, այսինքն ջուրին երեսն ի վեր քար թռցնելը, որով աղաք թէ՛ ծովի օդ կը շնչեն, եւ թէ՛ ծովի հետ խաղալ կը սորվին : Եւրոպայի մէջ աշակերտներուն կուսուցանեն նաեւ լողալ, ձի նստիլ, եւայլն զորս մեր դպրոցականներուն համար պահանջելը անտրամաբանական կրկայ :

Երբեմն սակայն կրնանք ընդունիլ շար-

(1) Ծար. նախորդ Թիւէն եւ վերջ.

ժուռն գործիքներով եղած մարմնամարզութիւններէն մէկ քանին, ինչպէս հաշտեալ պիլը, եւ կարգ մըն ալ Անգղիական խաղեր, զոր օրինակ ֆութ-պօլը, սեռսոն, ֆութբոլ, յոուն-թենիսը, որոնք թէ՛ դիւրագնի են եւ թէ՛ չա՛տ յարմար ձմեռուան զրօտանքի, երբ գէշ օգերու պատճառաւ աշակերտները չիկարենան լապ օդի մէջ ելլել եւ երթալ խաղալ ազատ դաշտի մէջ:

Զրօտցնենք, խաղցնենք ուրեմն մեր մանուկները, զրօտանքով եւ խաղով է միայն որ տղուն միտքը բան կրնայ սորովիլ, մարմինը առողջ ըլլալ. ֆիզիքական լաւ դաստիարակութեամբ միայն կարելի է տղուն մի բարոյականը ուղղել, սիրտը կրթել, կորովը սրել:

Աշխատինք ընել եւ ի գործ դնել ինչ որ մանուկներու մարմնային շարժում կրնայ պատճառել, մարմնային շարժումները կեանքի ամենամեծ եւ ստիպողական պահանջն են. պէտք է զանոնք կրթել, կրթելով կրթել:

Մարմնի շարժումութեան պէտքը կարեւոր զգացում մըն է ա՛յնչպիսի, ո՛րչափ քաղցը եւ ծարաւը, ըսած է Տոքթ. Լակրանժ. եթէ այս պէտքը գոհացում չունենայ, կը ծնի անհանգստութիւն, որուն անմիջական արգիւնք է զրգումն ու ջղայնութիւն: Մանուկը շարժումն է ալ մըն է, դպրոցը անոր համար անշարժութեան արգելարան մը ըլլալու չէ, ըսած է Միշլէ. շարժումով մարմինին բոլոր մասնիկները կը վերածնին, իսկ անշարժութեամբ կը վատթարան ու կը հիւանդանան. անշարժութիւնը սանջանք է. ժամանակին յանցաւորները երբեմն բռնի անշարժութեան կը դատապարտէին. Տամիէն անուն ոճրագործը խոստովանած է թէ պատիժներու ամէնէն սոսկալին, տանջանքներու ամէնէն անկրեւին է՝ բռնի անշարժութիւնը, որուն դատապարտեցին զինքը իր դատաւորները. վախնա՛նք ուրեմն նստուկ եւ անշարժ կեանքէ, եւ մեր աշակերտներուն չստիպենք բնաւ անշարժ նստիլ, եւ չերեքալ. աշակերտները շարժումի եւ երեքալու պէտք ունին, իրենց գործարանները ինչպէս եւ իրենց միտքը նստուկ աշխատութիւններու դատապար-

տուելու համար չեն, վարժարանին նըստարանները փոքրիկ մանուկներու տեղը չեն, ամէն բան հոն հակառակ է բնութեան. առանց այս կէտն ուշադրութեան առնելու, կը պահենք զանոնք հոն երկար ժամերով, գամուած իրենց նստարաններուն վրայ, հակած իրենց գիրքերուն վրայ, եւ կը պատուիրենք իրենց լուծիւն, ուշադրութիւն ու անշարժութիւն, երեք բան որոնք բժշկապէս բարեկեցիկ արգիլուած են անոնց, իրենց գործարաններու բնական վիճակին պատճառաւ. արգիլուած է այո՛ լուծիւնը եւ անշարժութիւնը, որովհետեւ անոնց ճայնի եւ շարժումի գործարանները դեռ խակ եւ զարգացած չեն եւ շարունակ մարզանքի պէտք ունին զարգանալու համար. արգիլուած է նաեւ ուշադրութիւնը, որովհետեւ անոնց ուղեղը տհաս է, կարող չէ տակաւին ո՛ր եւ է բան մը ըմբռնել, անոնց միտքը անդադար զարթումի մէջ է եւ կայծակի պէս մէկ տպաւորութենէ միւսը կը ցատկէ. մանուկներու դատապարակութիւնը հիմնուած ըլլալու է սա չորս սկզբունքին վրայ, ֆիզիքս, ազոս օդ, շոս զրօտանք եւ մարմնամարզութիւն. միայն արդի մանկավարժութիւնը չէ որ կը պահանջէ այս, այլ եւ բնութիւնը լսելեայն խրատաւու կըլլայ մեզ միշտ ատոր. ուշադրութեան առնենք պահ մը գետերը, ծովերը, ի՞նչու համար է որ տարուան ամէն եղանակներուն մէջ շատ եւ շատ անգամներ սրնթաց հոսանքներ, փրփրադէզ կոհակներով զանոնք վերի վայր կը տատանեն, ո՛չ ապաքէն այդու ծովերը, վտակները, գետերը կերպ մը մարմնամարզութիւն կընեն, իրենց միլիոնաւոր աղտեղութիւններէն մաքրուելու եւ սրբուելու համար, առանց որո՞ւ, դիրքին է գիտնալ, որ անոնք մնայուն եւ անշարժ վիճակի մը մէջ կրնային դարչահատիլ եւ չունենալ այն ջինջ յոտակութիւնը զոր կունենան փոթորիկներէ յետոյ. Երկրագնդիս յարաշարժ թաւալումն իսկ իր առանցքին վրայ, միթէ իրեն համար մարմնամարզութիւն մը չէ՞, ի՞նչ կըլլար այն՝ եթէ դադրէր անգամ մը իր այդ շարժումէն. անշուշտ անոր կէսը արեգակին հրատապ ճառագայթներուն մէջ կիպելով կ'այրէր, եւ միւս կէսը խաւար մթութեան մը մէջ սուզուած կը հիւծէր:

Սիրահարինք, փարինք ուրեմն մարմնա-
մարզութեան, եւ մեր մանուկներուն կենտա-
պահ շարժումներ ընել տանք միշտ, զըօսարի
խաղերով տնոնց միտքը զբաղեցնենք, հրճուա-
լի պարերով անոնց մարմինը մարզենք, սոր-
վեցնենք անոնց լեռներն ի վեր սողալ, ժայ-
ռերն ի վեր մագլիլ, ծառերն ի վեր շուրջվիլ
կուռիլ ծովուն ալիքներուն դէմ, տոկալ ա-
մէն տեսակ օդի, ցուրտին, պաղին եւ տա-
քին. այսպէս միայն կրնանք մեր աշակերտ-
ներուն ֆիզիքական ընտիր եւ լաւ դաստիա-
րակութիւն մը տալ, զանոնք մենէ աւելի ա-

ռողջ ընել, եւ մենէ վերջն ալ, մենէ աւելի
ուժեղ սերունդներ ունենալ:

Հերիք է որ կամք ունենանք, զիտնանք
օգտուիլ եւրոպական ազգերու փորձառու-
թիւններէն եւ ահա չա՛տ զիւրութեամբ կըր-
նանք առողջապահական պահանջներու հա-
մաձայն կանոնաւորել մեր մանուկներուն ֆի-
զիքական կրթութիւնը, որուն վրայ պիտի
հիմնուին անոնց իմացական եւ բարոյական
կրթութիւնները:

ՏՈՔԹ. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՍԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ



Թէեւ Իտալիոյ մայր թագուհին Վենետիկ
առանձնացած է այս պահուն, — ուր՝ ինչպէս
ծանուցուեցաւ՝ այցելեց նաեւ Ս. Ղազարու
վանքը եւ ներկայ գտնուեցաւ Միթիմարեան
Հարց մատրան մէջ կատարուած հօգեհան-
գրտեան պաշտօնին, — բայց այս մեկուսա-
ցումը պատճառ մը չէ որ Հռոմի ու Նաբոլիի
թերթերը չզրաղին իրմով: Իտալական մա-
մուլին մէջ մասնաւորապէս ինդրի առարկայ
դարձած էր այն հեռագիրը զոր Մարգարիտա
թագուհին Մոնձայէն ուղղեց Բրիսքօ կար-
դինալին, անոր ցաւակցական հեռագրին ի
պատասխան: Ամէն մարդ զարմացած կը մնար
թէ ինչո՞ւ թագուհին այդ հեռագրին տակ
ստորագրած էր «*Margherita, povera donna*» — մինչդեռ իր
միւս հեռագիրներուն տակ միմիայն իր ա-
նունը դրած էր, առանց այս սրտայոյզ ու
խոնարհ բացատրութեան: Այս գաղանիքը
լուծած կ'երեւայ Տիկին Մաթիլդ Սէրասօ, ի-
տալացի նշանաւոր գրագիրուհին, որ այս
առթիւ յօդուած մը հրատարակելով Քոռի-
եռե Տի Նաբոլի լրագրին մէջ հետաքրքրա-
շարժ մանրամէտք մը կը պատմէ, աւելցնելով
թէ Հռոմի արքունեաց բարձրագոյն տի-
կիներէ մէկէն իմացած է զայն:

Ումպէրթօ թագաւորին մահուան յաջորդ

օրը Մարգարիտա թագուհին կ'ուզէ անձամբ
պատասխանել ամէն կողմէ հասնող հեռագիր-
ներուն, եւ ինք կը խմբագրէ պատասխան-
ները. բայց որովհետեւ թագուհին ձեռա-
գիրը չի կրնար զրկուիլ հեռագրատուն, քար-
տուղար մը կը նշանակուի՝ զանոնք ընդօրի-
նակելու համար: Շատ չանցած, հեռագիր-
րուն թիւր այնքան կը ստուարանայ, որ
քարտուղարն ալ կը հարկադրուի իրեն օգնա-
կան մը առնել՝ անոր աշխատութեանը վրայ
հոկելով սակայն: Եւ ընդօրինակութեանց մէջ
սխալ մի չպատահելու համար, կարեւոր հե-
ռագիրները բաւ աւրաւ ինք Տիքե կ'ընէ ա-
նոր, փոխանակ ձեռագիրը յանձնելու: Ասոնց
մէջ կը գտնուէր նաեւ Բրիսքօ կարդինալին
ուղղուած պատասխանը, եւ այնքան խորին
վիշտ մը կ'արտայայտէր, որ քարտուղարը
սատկապէս կը յուզուի եւ «*Մարգարիտա*»
ստորագրութեանը հասած պահուն՝ խորին
հաւաչանքով մը կ'ըսէ բարձրաձայն.

— Հէ՛գ կինը...

Ընդօրինակողը, կարծելով որ այս բառերն
ալ մաս կը կազմեն ստորագրութեան, մեքե-
նական ճշդութեամբ կ'աւելցնէ զանոնք: Նոյն
իրիկունը, երբ հեռագիրը երեւցաւ թերթե-
րուն մէջ, թագուհին սողած մնաց անոր
տակ տեսնելով իր այլափոխուած ստորագրու-

թիւնը «Մարգարիտա, հէգ կինը» . բայց այնքան ընկճուած էր իր սուգով, եւ պարագան այնքան տարօրինակ էր, որ արքունական շրջանակներուն մէջ հարկ չգտանցին զեկոյցով մը ուղղել, ու այսպէս՝ սխալը ուղիղ տեղ անցաւ մինչեւ վերջին օրերս :

* * *

Պալաքի մահուան յիսնամեակին առթիւ, Փրանսացի գրագէտներու եւ բանաստեղծներու խումբ մը նախորդ շարժումն «ուխտադնացութիւն» մը կատարեց իրապաշտ մեծ վիպասանին բնակարաններուն, Բարիզի մէջ՝ Ռէյնուաու փողոցը եւ Սէնդ-Օնօրէ արուարձանը, եւ քաղքին շրջակաները՝ ի վիլլ-տ'Ամբէ, Ռօշիլտ պառնուհիին պատկանող դարաստան մը որուն մէջ կը գտնուէր այն տունը ուր մեռաւ Պալաք : Այցելուները ուրախ եւ հետաքրքիր եղան մասնաւորապէս Ռէյնուաու փողոցին մէջ ուր գրեթէ անխօսիս կը մնայ վիպասանին բնակարանը : Արդի տանտիրուհին, որ Պալաքի տանտիրուհիին թոռն է, շահեկան մանրադէպներ պատմեց : Ինքը, տակաւն պզտիկ աղջիկ մը, լսած է Պալաքին ըսելը թէ այդ Ռէյնուաու փողոցին մէջ անցուցած հինգ տարիներու միջոցին 200,000 Փրանքէ աւելի շահած է : Այդ բնակարանին տարեկան վարձքը 600 Փրանքէր էր այդ թուականին : այսօր 4000 Փրանքի բարձրացած է : Տանտիրուհին կը պատմէ նաեւ թէ Պալաք շատ անգամ օգնութեան կը կանչէր իր մեծհայրը, փոխադրելու համար իր կիսարձանը զոր շինած էր Տափի տ'Անժէ :

— Պարոն Պաուլիէ, կ'ըսէ եղբւր Գոմէսի Իւլիենի հեղինակը, քու վրագ միայն վատահաւթիւն ունի՞ր . քիչ մը օգնէ ինձի՞ որ ինքզինքն տեղափոխեմ :

Պալաք, իր պարտապահանջներուն ձեռքէն խոյս տալու համար, այդ բնակարանը վարձած էր կնոջ մը անունով որուն հետ կը կենակցէր այն ատեն : Նեղսիրտ բնաւորութեան տէր սպասուհի մը ունէին որ, օր մը, բարկութեան վայրկեանին, Պ. Պաուլիէի թուանը ներկայութեանը, Պալաքին կոչիկները նետեց պնակին մէջ ուրկէ կը ճաչէր ծերուկ վիպասանը : Այդ դաժան սպասուհիին թու-

ներն ալ կը բնակին այսօր նոյն տունը :

Այցելուները, միջօրէէն յետոյ, վիլ տ'Ամբէ գացին ուր գալապիւն ճաշ մը բրին . սեղանին վրայ, ու սեղանէն ետքը, ոտանաւորներ արտասանուեցան եւ կարդացուեցաւ այն գեղեցիկ դաժնականը զոր Վիքթօր Իւկօ արտասանած էր Պալաքի յուղարկաւորութեան օրը : Գրագէտ Փրանսուէի մը, որ կ'ընկերանար այցելուներուն, նկարագրեց թէ գեղեցիկ սեռը ինչ պաշտում ունի վիպասանին համար որ գիտցաւ այնքան լաւ պատկերացնել կիները՝ մանաւանդ իրենց կեանքի աշունին շնորհալի խոնջէնքին մէջ :

Այս գրական ուխտագնացութիւնը աւարտեցաւ սիրուն նուագահանդէսով մը զոր կազմակերպեցին գրագէտներուն ու բանաստեղծներուն ընկերացող Բարիզեան ծանօթ արուեստագէտներ ու արուեստագիտուհիներ :

Քանի որ մեռած վիպասանի մը յիշատակութիւնը կ'ընենք, աւելցնենք նաեւ, իրեւորուան լուր մը. թէ Փրանսայի «Գրագէտներու Ընկերութիւն»ը հանգանակութեան ձեռնարկած է Ալֆօնս Տօմէի արձանը կանգնելու համար Բարիզի մէջ, «ժողովինեւ-տու մար»ին զուելը ինք ստորագրելով 1000 Փրանք : Երկու օրուան մէջ բաւական դուրս մըր մը գոյացած է արդէն, եւ արձանագործ Ռընէ տը Սէն Մարտօ խիոյն գործի ձեռնարկած է, յայտարարելով թէ այնքան խորին պաշտում մը ունի Ճեֆի հեղինակին նկատմամբ, որ ինչ ալ ըլլայ գոյանալիք գումարը, ինք պիտի չինէ մեծանուն վիպասանին արձանը :

Ալֆօնս Տօմէի անունը միաբերնիս կը բերէ այն գեղեցիկ ուսումնասիրութիւնը զոր Տիգրան Կամսարական հրատարակեց ատենօք Մասիսի մէջ, բազմը ունեցած ըլլալով ներկայանալու մեծանուն վիպասանին՝ իր առաջին ուղեւորութեանը միջոցին ի Բարիզ, — եւ Ճեֆի թարգմանութիւնը, թերթօնի ձեռով, Արեւելի մէջ : Պալաքէն ու Պալաքի վրայ բան մը չենք ունեցած հայ մամուլին մէջ, կամ գրեթէ : Ինչ յարմար է առիթը, եթէ մեր ձեռնհաս աշխատակիցներէն մէկը յանձն առնէր ուսումնասիրութիւն մը ընել Պալաքի գործերուն :

Ֆ.

ՆԱՐԵԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

— 0000 —

Ա.

Վերջերս, Արամ Անտոնեան, Արեւելքի մէջ իր սկսած «Աջ ու ձախ» շահեկան յօդուածներէն մէկը նուիրած էր Բերայի Նարեկեան վարժարանին, որուն տեղը կը բարձրանայ այսօր Էստեան վարժարանը: Ես ալ այդ «Հին, խարխուլ եւ վայրկեանէ վայրկեան փլշիլ սպառնացող դպրոցին» մէջ անցուցած եմ շուրջ երեք տարուան ուսանողութեան ջրջան մը որուն յիշատակները կը յանձնեմ Մաւխանի, — իրրեւ նմոյշ մը մեր հին դպրոցական բարքերուն:

Այդ դպրոցը մէկ յարկի վրայ շինուած փայտաշէն տուն մըն էր. հոն երթեւեկել սկսած Ժամանակս, — հիմայ քսան տարի կայ, — դեռ դիմացի Զաբիօնի հսկայ շէնքը չէր կառուցուած ու Այի Թրիատայի եկեղեցին դեռ նոր սկսած էր շինուիլ:

Մեր դպրոցին փողոցի կողմը մօթ եւ մեծ խանութ մը կար որ կառք նորոգող Ահարունին վարձուած էր: Քովնտի դռնէ մը ներս կը մտնէինք, որուն վրայ քարէ գոյգ մը թաղար դրուած էր. զրան ներսի կողմի անկիւնը Ս. Յարութիւն մատրան զանգակը կախուած էր:

Առջի քայլերնու՝ կը գտնուէինք նեղ պարտէզի մը մէջ որ իր խորթուրորտ սաղա-յատակովը աւելի անել փողոցի մը կը նմանէր քան պարտէզի. որուն աջ կողմը կը գտնուէր պանդուխտ քահանային խցիկը. քովը մեծ կակ սենեակով մը որուն վրայի սեւ տախտակը դեղին գիրերով «Թաղ. Խորհրդա-րան» բառը կը ցուցնէր ամէն հետաքրքիր աչքերու. այս Թաղ. Խորհրդարանը ամբողջ մեր փառք ու պարծանքը կը կազմէր իր գիսաւոր ու աւրուած դաշնամուրով, իր փոքրիկ գրգատունով. հոն կը նստէր դպրոցին տնօրէնը. դուրսը, այդ սենեակներուն տա-նիքներէն դէպի վարժարան երկնցած գե-րաններու վրայ որթատունկի մը իր տերեւ-ները ու ճիւղերը տարածած էր, ինչ որ ա-

գարակի մէջ շինուած տան մը կերպարանքը կուտար Նարեկեանին:

Քանի մը ոտք սանդուխէ ելելով, կը մտնուէր վարժարանին մանչերու սրահը ուր կը նստէին ամէն կարգէ աշակերտներ. ձախ կողմը՝ դասարանները, իսկ աջ կողմին ճիւղ-մէջտեղը՝ քրիսթոսի ձեռով բարձրագիւր սե-ղան մը եւ ետեւը աթոռ մը կը գտնուէր. հոն՝ մեր գիրուկ կառավարիչը՝ Միւսիւ Գիր-գորիկը կը նստէր, որ այս պաշտօնէն զատ չեմ գիտեր ո՛ր յանձնաժողովին եւ կամ ո՛ր վարչական մարմինին քարտուղարն ալ էր, եւ անդադար կը գրէր: Սրահին մէջ ուսանող-ութեան Ժամանակ՝ երբ խժտուկը շատ բարձր խաղերու հասնէր, միւսիւ Գիրգորիկը գլուխը վեր վերցնելով կը պուար սթէնտօր-եան ձայնով մը՝

— Պարոնայք լռութի՛ւն. . . գերեզմա-նական լռութիւն կը պահանջեմ:

Այս սարսաղագեցիկ ազդարարութեան վրայ՝ ձայները քիչ մը կը նուաղէին:

Եւ կամ, իր չընդադադող նայուածքին հան-դիպող աշակերտի մը — որ քիչ մը իր չա-րածճիւղութեամբ հոգակի մը շինած ըլլար — գլխուն քստմնելի սպառնալիքներ կը տեղա-ցընէր. պղտիկ նմոյշ մը՝

— Ծօ՛ անպիտան, կը գոտար, հիմա քովդ կու գամ, ախնջէ՛ք կը լռենեմ, օգին մէջ ե-րեք անգամ դարձնելէ վերջ յանկարծ գետին կը գարնեմ քեզի:

Միւսիւ Գիրգորիկ. ո՛չ ոտք կ'ելէր եւ ո՛չ ալ իր սպառնալիքին մէկ կէտը կը գործա-դրէր, գլուխը նորէն իր առջեւի թուղթերուն վրայ ծռելով կը շարունակէր իր գիրերը, զորս կ'ընդմիջէր երբեմն ձեռքի զանգակը հնչեցը-նելով «վեցերորդ կարգ թուարանութեան» պտուար համար:

Բայց մենք ամէնքս ալ կը սիրէինք ու կը յարգէինք Միւսիւ Գիրգորիկը որ շատ համակ-րելի էր մեր ամէնուս համար. իր հսկողու-թեան գործին մէջ ներողամիտ օգի մը կը

դէնէր . հակառակ իր լուրջ երեւալու ճիգերուն աչքերը կը ժպտէին միշտ : Եւ արդէն ինչպէ՞ս կարելի էր այդ խառնիճաղանճ աշա . կերտներուն խոտովթիւն բանեցնել . վաճառականի մը տղան քովը՝ տպածոյ չապիկով ու սիրգած դէմքով ձկնորսի մը լաճը . ան . դին հոգաբարձուի մը զաւկին քովը հաւա . վաճառ Կիրակոսին տղան , եւայլն : Բայց այս ամէնուն միջեւ ո՛չ յօտորտանք կար հարուստի զաւակներուն կողմէ եւ ո՛չ ալ նախանձ կամ գանգատ աղքատիկ տղաքներու կողմէն . իրարու հետ կը ծեծկուէին , զիրար կը ծաղրէին . սակայն պէ՛տք եղած ատեն իրարու հանդէպ ճշմարիտ եւ անձնուէր բարեկամութիւն մը կը ցուցնէին :

* * *

Ի՛նչ մարդեր տեսանք հոն , ի՛նչ դէմքեր : Երբ հոգաբարձութիւն մը կը հրաժարէ՛ր՝ ամբողջ ուսուցչական մարմինը կը փոխուէր . հիները կ'երթային նոր դասաւանդներ գալու համար :

Բնաւ չեմ կրնար մոռնալ Հոգաբարձութիւն մը որուն թէ՛ անդամները եւ թէ՛ հետը բերած դասաւանդները անսգիւտ տիպարներ էին :

Այս Հոգաբարձութեան մէկ ազդեցիկ անդամը եկաւ դպրոցը պաշտեցաւ , մեզի քրնեց . չէնքը առողջաբանական գտաւ , մեզի ալ պարզապէս արգահատանքի արժանի : Միւսիւ Գիրգորիկին կ'ըսէր անիկա . «Մե՛ղք մեղք ազգին բարաներուն , մե՛ղք աս չօճուներուն որ ժամանակին պարասը անցուցեր են» : Ասով ալ չգոհանալով , ցատքեց ելաւ կառավարիչին տեղը եւ այդ քրիպիւնին բարձունքէն սկսաւ ճառաբանել .

—Չօճուխնե՛րս , եամբունե՛րս , գիտցած ըլլաք քիմ հոգաբարձուները ձեզի իրենց ձէպի բարայլին պէս կը սիրեն , եւայլն :

Ինչ տուէր էր մեզի համար այս խօսքը որուն մէջ «բարա»ն կը յեղեղուէր շարունակ , որուն չեմ գիտեր ի՛նչ այլակերպ ու այլանշանի դերեր կուտար մեր հոգաբարձուն որ լքուած սիրահարին սիրտին մէջ վերստին արթնցող յոյսերուն ներշնչած ոգեւորութեամբը կ'արտասանէր ի դիպս եւ յանդիպս այդ իր-

մէ հեռացող սիրուածին անունը որուն պղծտիկ շնորհքներուն պիտի արժանանար թեւեւ իր նոր տիտղոսին ուժովը :

Մենք չը սիրեցինք այդ հոգաբարձուն ինչպէս նաեւ իր աշխատակիցները մինչեւ իրենց հեռացման օրը :

Հապա իրենց հետ բերած ուսուցիչները , ան ի՛նչ անտանելի մարդեր էին , գիտնալիք . մանաւանդ մեր պատուական ու յարգելի Յակոբ Ոսկանին տեղ բերուած հայկաբան մը՝ որուն անունը յիշելու պէտք չի կայ : Այս մարդուկը՝ իր առջի դասէն՝ գոյնը դուրս տուաւ :

Թեւին տակէն խոշոր գիրք մը հանեց մէջտեղ . «Անագարսեայ ուղեւորութիւն յԵՐԱՂԱ»ին առաջին հատորն էր , զոր մեզի կարդայնել կ'ուզէր . ընկերներս զիս քնեցին առաջ : Դասատուն երեսը կը նայէի եւ կը խնդայի . երեսին վրայ ալ խնդալիք բան պակաս չէր . կախ գէմք մը , իրարու սրդողած աչքերու վրայ հաստ ապակիներով խոշոր ակնոց մը , եւ այլն : Ասանկ մարդու մը դէմը գանուխ եւ դուն ալ տասնըջուր տարեկան պզեզ մը ըլլաւ , ի՛նչ կ'ընես . . . հազիւ հազ ինքզինքս լռեցիւմ կը կարգայի , բայց սխալ պիտի կարգայի անշուշտ :

—Ծօ՛ւ աս ի՛նչ է , թուումպա չենք վերցնէր կոր : սկսաւ պօսալ մեր պատուելին բիրտ ձայնով մը :

Մենք այս խօսքերը լսածնուս պէս սկսանք լարձրածայն խնդալ :

—Վա՛յ , աս ի՛նչ թէքիֆսիպութիւն է , ա՛ն ձեզի բնտո՛ր թէրպիլէ ըրեր են . . . ինծի նայէ՛ Գիրգոր աղա՛ , գոչելով դասարանէն դուրս սուրաց :

Երբ Միւսիւ Գիրգորիկը լուրջ ու պաշտօնական կերպով մը ներս մտաւ , մեր քրքիչները կը շարունակուէին գեւ . եւ հազիւ հազ ականջներնուս կը զարնուէին մեզի դէմ տնօրինուած պատիժները :

Օր մը մեր այդ երեւելի հայկարան դասատուն աւելի սոսկալի կերպով բարկացաւ . ես էի դարձեալ իր զոհը :

Գրաբարի վերածելու համար աշխարհաբար գիրքէ մը տուն կու տար զոր յաջորդ դասին՝ գրաւոր կերպով պատրաստելու պար-

տաւոր էինք . մեզի դրեւ տալն ալ շատ ինք-
նատիպ էր . ամէն մէկ բառ արտասանելէ եւ
քանի մը անգամ կրկնելէ վերջ կը հարցնէր .
— Էղա՞ւ :

Մենք այդ բառը շատոնց գրած էինք ,
բայց չէինք պատասխաներ . դարձեալ « Էղա՞ւ »
կը հարցնէր , այս անգամ բարկութեամբ . կը
շարունակէինք մռնչ մնալ . պատուելին ողոր-
մուկ եւ համակերպող չեղտով մը , — « Չ'ըսե՛ր » ,
կը հառաչէր :

Հետեւեալ դասին գրաւոր թարգմանու-
թիւն մի՛ փնտռէք մեզմէ . այլ առջի դասին
գրած աշխարհարար պատճէնին վրայէն գրա-
քաւ շեղուով կը կարդայինք , այս լեզուն ա-
մէն լեզուի կը նմանէր բացի գրարարէ : Բայց
մեր հայկարան-վարժապետը խղճմտութեամբ
սրբագրել կուտար մեր գրաւոր հրահանգնե-
րը . չոր գրիչը քիչ մը կը խաղցնէինք թուղ-
թին վրայ , պատրանքը կատարեալ էր եւ
պատուելին ալ գոհ :

Անգամ մը դարձեալ խղճի ամենայն հան-
դարտութեամբ կը գործադրէինք այս հնարքը ,
երբ չեմ գիտեր ո՛ր ստանան փոքր մտաւ ,
— « Ծօ՛ , սալիկա վերէն վար մէյ մըն ալ
կարդա՛ նայինք , ըսաւ :

Ինչ ընելու էր . սրբագրուած էր իմ գրա-
ւոր թարգմանութիւն (°) . սրբագրուածը
կարդալու էր . վարանելու վայրկեան չկար .
բոլոր քաջութիւնս ժողվելով սկսայ դարձեալ
իմ անձունի գրարարովս կարդալ . մարդը
ոտքի ելաւ , քովս եկաւ , տեսաւ որ իր տուն
տուած աշխարհարար պարբերութիւնները կը
կենային կոյս ու անապակ :

— « Ծօ՛ անպիտան , հիմա սա սուրբթիգ
չամար մը կը վարենմ կը տեսնա . . . Ինծի
խըմալը քեզի դրիւ կը կանչուբուէր երեսս
ի վեր , կաս կարմիր կարած :

Կացութիւնս փախուկ էր . մանաւանդ որ
բարի-ծաղիկ գասընկերներս ինքզինքնուն հա-
մար վախնալով , եւ այս շանթահարող քա-
մահրանքներէն զերծ մնալու միտումով չէին
քաշուեր մեղադրելէ . . . իմ արարքս :

— Աս կը վայլէ՞ , աղբար , միւսին դող
եղալուն պատճառ եղար . . . Ինչ կ'ըլլար ,
ձեռքդ կը կոտրէ՞ր սըւոր գրարարը գրելով ,
կը միմուային :

Ես ա՛լ չկրնալով հանդուրժել այս աստի-
ճան լսիրշութեան , պիտի պոթկայի եւ ա-
մէնքն ալ բերան տայի , եւ կամ մեր մահ-
տեսի վարժապետին հետ կոկորդ կոկորդի
ծեծկրուքի պիտի բռնուէի : Ամէնէն խոհեմը
սեպեցի դուրս նետել ինքզինքս՝ եւ շիտակ
դիմել տնօրէնին սրուն բաւական համակրանքը
վատարկած էի . եւ լալապին ձայնով մը ա-
պաւինեցայ անոր , պատմեցի եղած դացա-
ծը . . . քիչ մըն ալ չափազանցութեամբ : Ա-
ռիթմէն օգուտ քաղելով , այդ հին-օրէնք
պատուելին դրութիւնը կը քննադատէի :

Ինծի մտիկ ընելէ վերջ , տնօրէնը ինքնի-
րէն կ'ըսէր՝

— Ա՛խ , ես անոնց ըսի որ Ոսկանը չհա-
նեն , այս մարդը մեր գործին չպիտի գայ :
Ազատած էի :

Երկրորդ դասին , մեր հայկարանը կակուղ-
ցած էր . ինծի չտեսնել կը ձեւացնէր : Մի-
այն , երբեմն , միւս ընկերներուս կը հար-
ցնէր՝

— « Ծօ սա Մինէճեանը աչքս չխածնէր
կոր , անոր մազին թելին դպչել չ'ըլլար եղբր ,
դասատուներուն ամսականները ա՞ս կու տայ ,
ժամին մոմերը ա՞ս վառել կու տայ :

Այն օրէն ի վեր գրարար հրահանգի փոր-
ձանքէն ազատեցանք : — Բայց քիչ քիչ իրա-
րու վարժուեցանք . երբ տեսայ որ պատուե-
լին անուշցու , աւելի քաղաքավար վարուիլ
սկսաւ հետեւին , ես ալ իր դասերուն աւե-
լի սիրտով աշխատիլ սկսայ . հիմայ գոհ էր
ինծմէ , եւ օր մըն ալ իր գնահատման ար-
ժանացայ շրթունքները պրկեցան , ձախ աչ-
քը պզտիկցաւ . գոհութեան ժպիտն էր այս .
եւ ըսաւ . — Տեսա՛ր Մինէճեան , ընտո՛ր ճշտո-
րեցար :

ԳԻՄՄԷՆ

Չ Ա Մ Լ Ը Ճ Ա



Ասիական եզերքին վրայ բարձրացող կո-
նաձեւ զոյգ մը բլրակներ են անոնք, վե՛ր
վե՛ր ցցուն՝ կապոյտին լանջքն ընդգրկող :

Օրուան հեւ ի հեւ վազվզուքէն վաստա-
կարեկ, ինքզինքս կը նետեմ՝ այդ քոյր բըլ-
րակներու թաւուտքն ի վեր, ուր մոռնալ
պիտի փորձեմ միտքս չարչրկող մտածումները :

Կ'անցնիմ արագ արագ ու հապճեպ այն
լայն ուղիէն, որ իր երկու թեւերուն մէջ
կ'ընդգրկէ Սկիւտարցիներուն հանդստարանը
վերջին : Կեանքի այս սահմանագլխին մօտիկ,
ուր մամուլատա կնձիներ անբազմաթիւ երե-
ւոյթով մեր սիրելեաց հոգաւորները կը հո-
վանաւորեն, պահ մը կ'անց կ'առնեմ : այս
մահաստուեր վայրը եզերող չըջապատին կից,
աչքիս առջեւ կը ցցուի նորը ու ճերմակ սե-
պածեւ մահարձանը Սկիւտարցի վաղամեակի
բանաստեղծին :

Տերեկուան լափիկըզ տապն արեւին, տը-
գէն տեղի տուած էր մեզմ անուշ զովութեան
մը, ու արեւին բոց ճաճանչները վերջին,
հրդեհներով արեւմուտքը կերպներանգէին հո-
րիզոնին վրայ փթթող ամպի թերթիկները
ձիւնաթայր : Հասած էի պզտիկ Չամլըճայի
ստորոտը, տապնջտակնիս տնակին առջեւ,
որ հինաւարց հսկայ ընկուզենիի մը թեւերուն
տակը պահուրտած կ'երեւար հեռուէն : Հոն,
տան շուրջը կը տեսնեմ կամակու պատրաստ
դէզ դէզ շեղջերը մանգաղուած ցորենին, ու
ամբողջ գործիքները երկրագործին, սայլը,
մաճը, արօրը, երկթանին, դրոմպը, կամար,
նկուրն ու հեծանոցը, եւ, զոյգ մըն ալ խա-
տուակի տշուկներով սիրուն եզներ, որոնք
քով քովի կապուած, ցուակնին մատրին
մէջ, կ'որոճան հանգարտօրէն : Բարի գեղա-
ցիին նիւթական հարստութեան հետ իր կեանքի
հարստութիւնն ալ ուշադրութիւնս կը գրաւէ :
Հինգ մանչ մէկ աղջիկ, ամէնքն ալ կայառուն
ու կայառու : Նահապետական այս պարզ
կեանքը պահ մը մոռցնել կուտայ ինծի՝ քաղ-
քենի բաղմանձիւ ու ավակալից կեանքը :

Իրիկուան անպաճոյճ սեղանը կը սարքուի,
սրուն շուրջն ենք բոլորուած ամէնքս ալ :
Ճիշդ գիմացս նստած են տանտիրոջ երեք
չափահաս կանչուռ ու քաջակազմ՝ զուկները,
խանձած դէմքով, բոցալիւր աչքերով, սրունք
գաղտագողի ակնածանքի ձեւով մը, փոխ
ի փոխ ակնարկներ կը ձգեն վրաս, ինծի եր-
կիւղ ազդելու չափ : Այս մարդիկ, կերակուրը
ուտելէն աւելի կը լափեն անսագիտ անսո-
թակով մը, որ նախանձս կը շարժէ, մինչ
ես կուտեմ կերած ըլլալու համար, պատա-
ռիկներս համբերով :

Սեղանը վերջացած է, ու ճաշակիցներս
մէկիկ մէկիկ կը քաշուին քովէս, օրուան տա-
ժանքէն յետոյ անշուշտ հանգստի պէտք ու-
նին այս հարազատները բնութեան, որոնք
աշեւամուտին կը պառկին ու լուսնածագին
կարթըննան : Չեմ գիտեր թէ՛ մըջիւնները
ստոնցմէ թէ ասոնք մըջիւններէն սորված են
այս դասը :

Տան տիրոջ հետ քիչ մը խօսակցելէս յե-
տոյ, ինծի ալ ցոյց կը տրուի փոքրիկ սենե-
կիկ մը վանական խցիկի նմանով : Երկու
լուսամուտ միայն ունի որ երկու աչքերու
նման կը նային դէպ ի արեւելք : Տնեցիներ
բուն ամէնքն ալ խաղաղ ու անուշիկ քուն մը
կը քաշեն : Հոս ալ կրկին անքուն հսկողը ես
եմ միայն : Պատուհանէն դուրս կը նայիմ,
լուռ է ամէն բան : Ընտթիւնն ալ կը քնանայ :
Հոգեպիշ կը դիտեմ կապոյտը երկնքին, ուր
անտես հոգիներու աչերուն նման կը պլպլան
լոյսերը : Ու դանդաղ նազանքով մը կը տես-
նեմ ծաթով լուսնակն ուռճալիւր, մութ գի-
շերներու կեանքն ու հոգին, որ ծաւերու մէ-
ջէն բեկրեկեղով իր վէտվէտուն շողերը՝ կը
կաթկըթէ սփռմանքի ցողերը իմ հոգիիս վրան :

Խորհրդաւոր լուծիւնը այս գիշերուան,
որ կը տրեք ասպնջականիս տան կեանքի
փոքրիկ աշխարհին վրայ, դուրսը կը խլուէր
այն թռչնակն ընդհատ ու բեկրեկուն ձայ-
նով տրամագին, որ իր միօրինակ ողբերգը կը

հիւսէր մօտակայ անտառակին ծոցը : Անոր ձայնը չէր ճռողին մը հոգեզմայլ այլ խորհրդաւոր հեծկլտութիւն , որ կարծես իր կորուսած բնկերը կը փնտռէր ձայնելով ու կրկնելով իր «կո՛ւ կո՛ւ. կո՛ւ կո՛ւ» երգերը : Պահ մը մօտիկ կրնեմ մտայոյզ գիշերն անքուն երգող այս անրոյն թռչնիկը դժբաղդ : Հոս , ինչպէս ամէնէն ուշ քնացողը նոյնպէս ամէնէն կանուխ արթնցողն ալ ես եմ , Ա՛հ ինչ գեղեցիկ է սա բնութեան զարթնումը . աւրելքը կը դիտեմ Չամիլճայի սարահարթէն Ոսկեգանգուր Արուսեակն է որ յանկարծ դուրս կը ցայտէ ջրնջ կապոյտին ծոցէն շինատ աղջկան մը պէս իր փունջ խոպոպիկները տարտըղնած : Յետոյ կերեւայ Արշալոյսը . այլ եւս բացուած է ալօթարանը , ու հորիզոնն ալ ճերմկած : զիւղական աքաղաղներ , գիշերուան վերջին պահը կերպեն , ծառերու մէջ քնացող թռչնիկներն ալ ճլլտալով ձայն կուտան իրարու . բնութեան հետ արթնցեր են ասուններն ալ անասուններն ալ :

Դուրս կը նետուիմ ու կը սկսիմ վերելքս առանձին գէպի Չամիլճայի բարձունքն ի վեր , ուր արեւին առաջին ճառագայթները վարդաման , կարմիր նարստներ կը կապէին կանաչագեղ այն սիրուն բլրակներու ճակտին : Զով զխիւսիւն անուշակ շոյանքը կը գգամ քրտնածոր ճակտիս ու դէմքիս վրայ , եւ

մեղմով կերպեմ մանկութեանս սիրելի երգեւորէն մէկը՝

Ո՛հ ինչ անուշ եւ ինչպէս զով
Առաւօտուց փչես հաղմիկ

Վերն եմ , ճիշտ Չամիլճայի ուսին վրայ , ուր տենդոտ հեւքէ մը յետոյ լայն լայն շունչ մը կառնեմ լիաթուք , ծծելով մայր բնութեան ստինքներէն կուշտ ու կուռ օդ մը անապակ կենսատու :

Չամիլճայի սարահարթէն շատ սքանչելի ու հմայող է տեսարանը . Եւրօպական ու Ասիական եզերքները զիւրիւր պատկերներ կը զծեն աչքիդ առջեւ : Մարմարան կերեւայ լուրթ կապոյտ դաշտի մը նման , հանդարտ ու պսպղուն զոր կը բծաւորին սեպ կղզեակները ժեռուտ : Բնութիւնը կարծես իր էն հրաշակերտ գլուխ-գործոցներէն մէկը կը ցուցադրէ հոս :

Ծովին ու երկինքին անհուն կապոյտները , մտազմայլ խորհիլ կուտան ինձ . ու այս երկու անսահման կապոյտները զիրար չաղկապող չրջագլծերուն հանդէպ անհունութեանց մեծ Անհունն է որ կուգայ լեցնել պարապը հոգիիս , եւ միտքս կը սաւառնի դէպ ի ստեղծողին հրաշալիքներն ու մեծագործութիւնները : Չամիլճայի բլրակներն ու Վոսիօրը , տիեզերական այս անգիր մեծ մատեանին առաջին էջերն են անեղծ :

Սկիւսար

Մ.

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՍԻՔԱՐԵԱՆԻ միաբանութեան հաստատման 200րդ տարեգարծին առթիւ կատարուելիք յօրեւեանի հանդէսին կարգադիր մասնախումբը շրջաբերական մը ցրուած է , որ կ'ըսէ թէ Միսիթար արբան 1701 սեպտ. 8ին հաստատած ըլլալով Միսիթարեան միաբանութիւնը , Ի. դարուն հետ կը սկսի նոյն միաբանութեան երրորդ դարը : Ուստի փափաքելով արժանաւորապէս կատարել այս երկհարիւրամեայ յօրեւեանի յիշատակը , Միա-

բանութիւնը ոչ միայն կը ծանուցանէ զայս «մեր պատուական ազգայնոց որոց մտաւորական օգտին նուիրած են հայր մեր Միսիթար եւ սրբիքն իրենց նպատակը , Զանքն եւ աշխատութիւնը» , այլ եւ կը համարձակի խնդրել իրենց բարեյօժար նպատուր , ի պէտս ծախուց պատրաստութեան հանգիսի , որուն համար այլ եւ այլ գրաւոր վայելչազարգ գործեր առաջարկուած եւ սկսուած ալ են ի հրատարակութիւն :

«ՄԱՍԻՍ»-Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՅՈՒՇԵԼԵԱՆԸ

Օրմանեան Ս. Պատրիարք Հայրը այսօր Կայս. Պալատ կերթայ ի շնորհաւորութիւն Կայսերական Յորհեանի : Ինչպէս արդէն ծանուցուեցաւ օրաթերթերուն մէջ, Ն. Սըրբազնութիւնը պիտի մատուցանէ շնորհաւորական ու բարեմաղթական Ուղերձ մը, որ գեղարուեստական գործ մըն է, արարական ու արեւելեան սոճով պատրաստուած : Ուղերձը դրուած է թաւապատ ծածկոյթով չքեղ առօրի մը մէջ որուն վրայ կերեւայ Կայսերական Թուղբան, համակ սկեզոճ : Ուղերձը, որուն վրայ նկարուած է օսմ. զինա. նշանը, ու առօր. ամփոփուած են կանանչ ծոպերով կարմիր աքլագէ նրբահիւս պահաւանի մը մէջ : Ս. Պատրիարք Հայրը կը մատուցանէ նաեւ սկերչական գեղեցիկ արտադրութիւն մը. — Տիբլի թաշին արծաթեայ մանրանկարը, մէկ կանգուն բարձրութեամբ, որուն վրայ նրբահիւս կերպով փորագրուած ու քանդակուած են այդ պատմական կոթողին վրայ գտնուող բոլոր արձանագրութիւններն ու նկարները :

Երեսուղեմի Ս Պատրիարք Հայրն ալ Պաղեստինի վերաբերող մեծարժէք հնութիւն մը պիտի մատուցանէ ի Կայս. Պալատ, Վեհ. Սուլթանին Գահակալութեան 25ամեայ տարեդարձին աթիւ : Տ. Բարթուղիմէոս եւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսներն ալ կը մատուցանեն շնորհաւորական ուղերձներ, ճոխ նամակատուութիւն մէջ ամփոփուած :

Կայսերական զնանասում. — Վեհ. Սուլթանը բարեհաճած է Ա. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Սապահ լրագրոյ Տէր եւ Տիօրէն Միհրան էֆ Նազգալեանի որ կարեւոր դերք մը կը գրաւէ Կ. Պոլսոյ լրագրապետներուն մէջ եւ իր տպարանէն լոյս տեսած հրատարակութիւններով գնահատելի ծառայութիւններ կը մատուցանէ օսմ. մամուլին Նոյնպէս Դ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհուած է Տոքթ. Տիրան էֆ. Ղազարոս-

եանի : Մեր շնորհաւորութիւնները՝ մեր յարգելի պաշտօնակցին ու համակրելի բժշկին :

Բարեյիշատակ Գրիգոր Զանչեանցի յիշատակին համար, Պատրիարքական կարգադրութեամբ, հոգեհանգստեան պատարագ եւ պաշտօն պիտի մատուցուի օգոստ. 27ի կիրակին. Մայր Եկեղեցիի մէջ :

Արմաշի փոխ-վանահայր Դուրեան Սըրբազան թէեւ բուսական ապաքինած է, բայց դեռ երեք շաբաթի չափ մայրաքաղաքս պիտի մնայ՝ բժշկական դարմաններ ընդունելու համար :

Բ. Դեան իրաւագէտ խորհրդական Վսեմ. Գարրիէլ էֆ. Նորատունկեան, որ արձակուրդով Ն. քաղաք կը գտնուէր, մայրաքաղաքս վերադարձած է :

Մեծովայ վանքէն կորսուած գրչագիր մագաղաթեայ արծաթապատ Աւետարան մը որ 500 տարուան հնութիւն մըն է, իր զարդագրերուն գեղեցիկութեամբը անուանի, վերջերս գտնուէր է Վանայ առաջն. փոխանորդ Բագրեւանդեան վարդապետի ջանքով :

Ամերիկայի Լօրէնս քաղաքէն կը գրեն թէ Արսէն վարդապետ Վեհունի որ վերջերս հոն հասած էր, կը զբաղի կազմակերպել իր թեմը, որ ութը հայաբնակ քաղաքներէ կը բաղկանայ. այն է Լօրէնս, Լուէլ, Հէվըըլ, Նըպրիորդ, Նաչվէ, Մանչէսթըր, Բոնկլըտ եւ Տուըըր : Լօրէնսի որդիներն մարմինն ուրուր է առ այժմ երկու որը պահել վարագայ որբանոցին մէջ : Արսէն Վրդ. այժմ եկեղեցական կանոնագիր մը կը պատրաստէ իր թեմին համար :

Բազմավեպի սեպտեմբերի թիւէն կը քաղենք հետեւեալ լուրերը : « — Զիքակոյցի հայ գաղթական մը, Պ. Յ. Փուշմանեան նկար մը ցուցադրեր է Բարիդի մէջ, եւ արժանացեր է առաջին մրցանակի : — Օ. Թադէոսեանց, Շուշիի ազգ. եկեղեցւոյն եւ վարժարանին կտակեր է 1300 բուրլի : — Ա. Մանթաշոֆ 26,000 բուրլի նուիրեր է Թիֆլիզի հայ վանքին շինութեան համար : »

ՅՈՒՂԱՐԿԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ԷՍՍԵԱՆԻ

Հանգուցեալ Յովհաննէս ԷՖ. Էսսեանի մարմինը Մարտիրոսյէն մայրաքաղաքս բերուեցաւ չորեքշաբթի առտու Բագէի չողենաւով, եւ Ղալաթիոյ քարափին վրայ ընդունուելով Բերայի աւագերէցին, Էսսեան ընտանիքին անդամներուն, Պատրիարքարանի Բ. գործակատարին եւ Էսսեան Տան պաշտօնէութեան կողմէ, մեռելակառքով փոխադրուեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցին Հինգշաբթի, յուղարկուորութեան օրն ու ժամը ծանուցուեցան հետեւեալ Մահազգով.

Տիկին Աննա Գ. Էսսեան, Այրի Տիկին Յովհաննէս Էսսեան եւ իր զաւակները՝ Տեարք Հրանտ, Երուանդ, Աղուարդ Յ. Էսսեան՝ Տէր եւ Տիկին Գալուստ Կիւլպէնկեան եւ զաւակունք՝ Տէր եւ Տիկին Յարութիւն Ֆրէնկեան, Մկրտիչ Էֆէնտի Էսսեան, Տէր եւ Տիկին Վահան Մ. Էսսեան եւ զաւակունք եւ Էսսեան, Մոստիշեան. Յովասափեան, Կիւլպէնկեան եւ Ֆրէնկեան ընտանիքները ցաւ ի սիրտ կը ծանուցանեն դառնաղետ մահը

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ԷՍՍԵԱՆԻ

որ հանգեաւ ի Տէր ի 26 Յուլիսի (8 Օգոստոս) ի Պուժնիք Սիւս-Մէն (Ֆրանսա), ի խոր սուգ թողով մայրն, ամուսինն ու զաւակները, փեսաները, թոռները, եղբայրն, եղբորորդին, հօրեղբորորդիքն եւ համայն ազգականներն ու բարեկամները:

Յուղարկուորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի, Օգոստոս 18/31, Ուրբաթ առաւօտ ժամ 3/ին Ս. Մկրտիչ Էֆէնտի եկեղեցւոյ Բերայի, ուրիշ հանգուցեալ մարմինը թափօրի պիտի փոխադրուի Ս. Յարութիւն եկեղեցին եւ անտի Շիշլիի գերեզմանատունը, ուր քանդակ փոփուի ընտանեաց յատուկ դամբարանին մէջ:

Երէկ, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին նեղ կու գար յուղարկուորութեան ատուար ընդմութեան օր կը ըստարարուէր զին ամէն դասակարգերէն: Առաւօտուն կա. նուր, Տ. Մկրեան Հայրը պատարագ մատուց որմէ ետքը «տան կարգը» կատարուեցաւ ու ըստ ներկայ գտնուեցան հանգուցելոյն սգա. կիր մայրը ու Էսսեան ընտանիքին բոլոր անդամները: Ժամ 3/ին սկսաւ մեռելական աւարտութիւնը որուն կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրը՝ չըմպատուած եպիսկոպոսական դասէն եւ ընդմութիւն վարդապետներէ

ու քահանաներէ: Դագաղը, մահաբեմի մը վրայ դրուած, ծածկուած էր պսակներով ու ըստ մէջ նշանակելի թիւ մը կը կազմէին նաեւ Հոգաբարձութիւններու, Ազգատախանայի ու, Թաղ. Խորհուրդներու եւ ուրիշ ազգային մարմիններու կողմէ նուիրուածները:

Դամբարանաւոր խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը՝ գծելով հանգուցելոյն օրինակելի կեանքը սա երբեակի աւետիկաներով. « Մարդը իր ընտանիքին մէջ, իր գործին գլուխը, իր եկեղեցիին հանգէպ »: Կը ցաւինք որ այս հակիրճ էջին մէջ կարելի չէ գոնէ ամփոփումը զնեւ այդ դեղեցիկ դամբարանաւորն որ կենդանի չեղանով պատկերացուց Յովհաննէս ԷՖ. Էսսեանի կեանքին զլուստը յատկանիշերը, կանխահաւ ու յիմուքները, գործունէութիւնը, եւ բարեպաշտ ու բարեգործ ոգին որոնց դրական ապացոյցները յայտնի են: Ն. Սրբաշնորհները մասնաւորապէս ծանրացաւ այն համերաշխութեան ու եղբայրական սիրոյն վրայ զոր Էսսեան Յովհաննէս եւ Մկրտիչ Էֆէնտիները ունեցած են միշտ ինչպէս իրենց սեղանաւորական ու առեւտրական գործունէութեան նոյնպէս բարեգործութեան մէջ որ անբաժան եղած է ու անբաժան կը մնայ, ըսաւ, Էսսեանց անունէն:

Միթիթարական խօսքերով ու հանգուցելոյն յիշատակին օրհնութեամբ աւարտեցաւ դամբարանաւոր եւ հանդիսաւոր թափօրով առճարէն դուրս հանուեցաւ դագաղը որուն ծուպերը լուծած էին Տեարք Սեպուհ պէյ Մաքսուտ, Միքայէլ Էֆ Մամիկոնեան, Սարգիս ԷՖ. Համամճեան, Գրիգոր Էֆ. Խարեան, Պատրիկ ԷՖ. Կիւլպէնկեան եւ Տիգրան ԷՖ. Թօքաթեան, եւ առաջնորդուեցաւ Ս. Յարութիւն եկեղեցին ուր հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ նախագահութեամբ Տ. Գրիգոր արքեպիսկոպոսի:

Այս տխուր արարողութենէն վերջ, Էսսեան ընտանիքին բոլոր անդամները ընդունեցին ներկաներուն ցաւակցական արտայայտութիւնները եւ դագաղը մեռելակիր կառքով փոխադրուեցաւ Շիշլիի ազգ. գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ Յովհաննէս ԷՖ. մարմինը: Յուղարկուորներու մեծագոյն մասը մինչեւ գերեզմանատուն հետեւեցաւ դագաղին, վերջին յարգանք մը ընծայելու համար բարեխիշատակ հանգուցելոյն:

Արսօնաւէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ա. ՏԹԷՆՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինճանճըլար եօզուլու, Թիւ 27

ԲՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Սոյն Քոլէն, հաստատել կայս. Բարձր. Իրասեով, կազմակերպել է Եւրոպեան ու Ամերիկեան նոյն օրինակ հաստատութեանց նման, ունենալով նշանաւոր դասաւանդ կանաւ մը որով կը կառավարուի. նաեւ բնօրէն եւ յաջողակ ուսուցիչներ Հայերէն, Պոլկարերէն Քաղղիերէն, Գերմաներէն, Յունարէն եւ Թրքերէն լեզուաց: Ունի 8000 հասորներէ բաղկացեալ երկաբանական, հանքաբանական, կենդանաբանական եւ բուսաբանական հաւաքածոներ եւ բնագիտական, տարաբանական, բնախօսական եւ այլ բազմաթիւ գործիներ:

Քոլէնին նպասակն է ժամանակիս պահանջմանց համաձայն բարձրագոյն կարգի կրթութիւն մը տալ իրեն դիմող երիտասարդաց. նոր սնորհմութիւնք եղած են բնական գիտութեան դիւրութիւններ բնծայելու համար:

Բոպերդ Քոլէնի մէջ աւանդեալ գրական եւ գիտական ուսմանց լեզուն Անգլիերէն է. սակայն իւրաքանչիւր ուսանող պարտաւորեալ է ուսանիլ իր մայրենի լեզուն եւ տոմարին պատմութիւնը: Հայերէն լեզուի եւ Գրութեան համար գծուած է ուսման կատարեալ բնօրէն մը որուն պիտի հետեւի իւրաքանչիւր հայ ուսանող:

Հաստատութեան հոյակապ եւ քառաշէն շէնքերը կառուցուած են ի Բուլմէի Հիսար, Վոսփորի Եւրոպական կողմը զտնուող բերդերուն ետեւը բլրի մը վրայ, որուն դիմէր Վոսփորի ափանց վրայ գեղեցկագոյնն եւ ամենեւն առողջարար համարուած է:

Քոլէնին յառաջիկայ տարեշաբաթը կը սկսի սեպտեմբեր 15ին: Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել առ Տեսչութիւնն, ի Բուլմէի Հիսար:

Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Յ Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս առաջիկայ տարեշաբաթը կը սկսի սեպտեմբեր 4ին (Ը. Ե.) երեքշաբթի առտու: Տարեթուական է տասնութեց (16) Օսմ. ոսկի. 8 ոսկին Սեպտեմբերի եւ միւս 8 ոսկին Փետրվարի սկիզբը վճարելի:

Տնօրէնութիւնը ամէն ջանք եւ խնամք կը ցանկնայ վարժարանս ամէն կերպով գոնացուցիչ եւ բարեկարգ վիճակի մէջ պահելու համար:

Արդէն իսկ գտնուած կարող ուսուցիչներու ծանօթ խումբին վրայ աւելցուած է Մինաս Էֆ. Ծալեան: Մանուկ էֆ. Թ. աղեւտեան եւս պիտի ստանձնէ գեղագրութեան ու գծագրութեան դասերը, իբրեւ մասնագէտ ուսուցիչ այդ ճիւղերուն:

Տիկին Զեմպրա անձամբ պիտի հսկէ մասնաւորաբար փոքրիկներուն վրայ: Բոլոր աշակերտներն արդէն կը գտնուին վարժարանին բժիշկին անմիջական հսկողութեանը տակ:

Նոր աշակերտներու արձանագրութեան համար ծնողները կամ խնամակալները կը հրաւիրուին անյապաղ դիմել վարժարանին Տնօրէն Տր. Զեմպրայի (Պարտիզակ) որմէ կարելի է ստանալ պէտք եղած ամէն տեղեկութիւն, եւ կամ Մր. Փիքի, Պայպըլ-Հաուզ, Կ. Պոլիս:

8—10

ՀԱՍՏԱՏՆՈՒԼ 1852

ՏՔՐ Ս. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺԻՔ

396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ 396

(Յանգի գարեջրասան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դէմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստատիկ ցաւած ախտները մեկ անգամ ամէն կը լեցնեն. ցարով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակաւ, նորը, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ախտներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դեմքի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծանոթութիւն եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած:

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն:

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ կես գիշեր) հիւանդ կ'ընդունին:

Մանօք. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ:

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԵԱՒԱՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԵԱՒԱՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻՒՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան գրամատուհն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնն եֆ. Քաչուէրչեան

Կենաց ճիւղին տեսուչ

Միհրան եֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օսմ. Պանքայի գէմ :

ՆԱՏԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՅՈՒՆ

Բերա Մեծ փողոց թիւ 473

Նատիր Լուսանկարչատունը պատիւ ունի
ծանուցանել իր բազմաթիւ յաճախորդաց թէ
ամէն տեսակ լուսանկարներու վրայ զգալի եւ
արտասովոր զեղչ մը բրած է , որ պիտի տեսէ
մինչեւ ներկայ ամբան եղանակին վերջը :


Ա. ՊԱՌԻԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կանաւորման յատուկ ամեն տեսակ ապրանքաց

Կալաթա, Զիւլֆարի փողոց, Սեւանիկ խան, թիւ 1—9

Նոր հաստատուած սոյն միջերանոցներուն
մէջ կը գտնուին անգլիական գորգեր , տու-
քումա եւ թաշեայ գորգեր . ֆէշեններ , թիւշ
վարագոյրներ , սքորներ , քորնիշներ , գետինի
մուշամզաններ եւ զանազան տեսակներով ճօխ
կերպաններ , մահճակալներ , աթոռներ ու
հայելիներ : Կը վաճառուին յարգոյ հասարակ-
կութեան շատ դիւրամատչելի պայմաններով :

Սմասիկան վնարմանով — Վերջնական գին



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մըցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵԻՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՈՐԴԻԻՔ ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեպրուհապօլին , Պոլիս , Պահչէ-Գարու , Համիտիյէ ճատտէսի , Թիւ 7

Գնողներու համար վնարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ

